

Մարզպետի այցը Թալինի տարածաշրջանի համայնքներ

Աշխատանքային կարեւոր գործառույթներից մեկը համարելով բնակիչների հետ հանդիպումը, Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը, մարզպետարանում քաղաքացիների ընդունելություն կազմակերպելուց բացի, պարբերաբար այցելում է համայնքներ եւ տեղերում հանդիպումներ անցկացնում:

Հերթական այցը կայացավ սեպտեմբերի 16-ին՝ Թալինի տարածաշրջանի Ջարինջա, Հացաշեն, Ցամաքասար, Ծաղկասար եւ Մաստարա համայնքներում:

Բոլոր համայնքներում էլ գյուղացիները գոհունակությամբ եւ շնորհակալությամբ ընդունեցին մարզպետի այցը՝ այն դիտելով իբրեւ իրենց հանդեպ ուշադրության եւ հարգանքի նշան: Առանձնակի երախտագիտությամբ բնակիչները նշեցին մարզպետի նախաձեռնությամբ եւ դեկավարությամբ իրականացված այցելությունը դեպի Արցախի, որի ժամանակ իրենցից շատերը հնարավորություն ունեցան հանդիպելու իրենց զինորդներին: Բնակիչները ներկայացրին իրենց համայնքներում առկա հիմնախնդիրները, որոնք հիմնականում վերաբերում էին ճանապարհների, դպրոցների վերանորոգմանը, խմելու եւ ոռոգման ջրի մատակարարմանը, հանրային բնույթի այլ հարցերի:

Մարզպետը պարզաբանեց, որ բարձրացված բոլոր հարցերին էլ ինքը քաջաձանոթ է, եւ դրանց լուծման ուղիներն էլ իրատեսական են: Դրանք բոլորն էլ ընթացքի մեջ են, որոնք իրականացվելու են ըստ ժամանակացույցի:

Եղան նաեւ անձնական բնույթի հարցադրումներ, որոնք դրական լուծում ստացան: Ըստ անհրաժեշտության, տրվեցին պետպատվերով բուժօգնություն ստանալու, ինչպես նաեւ առողջարանների ուղեգրեր, հատկացվեց դրամական օգնություն:

Սարգիս Սահակյանն ասաց, որ գյուղացիական տնտեսությունները հնարավորություն ունեն օգտվելու կառավարության աջակցությամբ իրականացվող սերմացուի, դիզելային վառելիքի, ազոտական պարարտանյութի հատկացման ծրագրերից եւ հորդորեց ակտիվորեն ներգրավվել այս գործընթացին: Գյուղացիները տեղեկացան, որ առաջիկայում

տարածաշրջանում հերթական անգամ իրականացվելու է «Լուրյս հայի աչքերին», ծրագիրը, որից կարող են օգտվել բոլոր ցանկացողները: Ներկայացնելով բուժօգնության, սոցիալական և այլ ոլորտներում առկա հնարավորությունները, մարզպետը գյուղացիներին առաջարկեց դիմել իրեն ցանկացած հարցով:

Սեպտեմբեր ամսին Սարգիս Սահակյանը հանդիպում կունենա նաև Ապարանի և Արագածի տարածաշրջանների համայնքների բնակիչների հետ: